ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 մարտի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

30
(3061)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՏՎԻԵՆԿՈՅԻՆ ԳՐԿԱԾ ԿԴԻՄԱՎՈՐԻ՞ ԻՆՉՊԵՍ ԽՈՍՏԱՑԵԼ ԷՐ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը չի կողմնորոշվում՝ ամռան սկզբին ինչպես դիմավորի Հայաստան այցելող ՌԴ Դաշնային խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյին:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին՝ հետաքրքրվելով. «2022 թվականի սեպտեմբերի 17-ին, երբ Դուք օդանավակայանում երկու ձեռքով ողջունելով, ծաղկեփնջով դիմավորեցիք ԱՄՆ ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիին, ՌԴ Դաշնային խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն տարակուսել էր այդ ջերմ վերաբերմունքից: Ի պատասխան՝ Դուք խոստացել էիք, որ երբ Մատվիենկոն Հայաստան գա, կգնաք եւ ինքնաթիռի մոտ նրան գրկած կդիմավորեք: Հիմա պարզվել է, որ Մատվիենկոն առաջիկայում Հայաստան կգա: Ըստ այդմ, ցանկանում ենք իմանալ՝ արդյոք կկատարե՞ք Ձեր խոստումը եւ նրան գրկած կդիմավորե՞ք ինքնաթիռի աստիճանների վրա»:

Սակայն ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը դեռ չգիտի՝ կատարելու է խոստումը, թե ոչ: Համենայնդեպս, նրա ուղարկած պատասխանը ոչնչի մասին է. ««Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իմաստով այն հարցում չի հանդիսանում»: Ահա Մատվիենկոյին դիմավորելու մասին ուղիղ հարցին ինչ անբովանդակ պատասխան է տվել Ալեն Սիմոնյանը ԱԺ նախագահի խոսնակի միջոցով:

Հիշեցնենք, որ ՌԴ Դաշնային խորհրդի նախագահը, նախնական պայմանավորվածությամբ, Երեւան կժամանի այս տարվա հունիսի 5-6-ը:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ Ազգային ժողովում երեկ կայացած դռնփակ հանդիպումը լարված է անցել, ուղեկցվել գոռգոռոցներով: 2020 թ.-ից անհետ կորած զինծառայողների ծնողների պահանջով երեկ Ազգային ժողովում դռնփակ հանդիպում է եղել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը դռնփակ նիստից որոշ մանրամասներ կարողացավ պարզել: Նախ տեղեկացանք, որ հանդիպմանը մոտ 30 ծնող է մասնակցել, որոնք զայրացած են եղել Անդրանիկ Քոչարյանի հարցազրույցից: Մոտ մեկ շաբաթ առաջ Անդրանիկ Քոչարյանը լրագրողների հետ ճեպազրույցում ասել էր, որ լսումների ժամանակ խոսվել է քննության միջոցով ձեռք բերված փաստացի տվյալների մասին, թե որտեղ փնտրենք անհետ կորածին, կամ զոհվածի մահվան հանգամանքները. «Մոտավորապես 173 այդպիսի գործերի շարունակություն կա: Մասունքները պետք է փնտրել այսօր հակառակորդի մոտ. դրան հասնելու համար ե՛ւ Հայաստանի ե՛ւ Ադրբեջանի հանձնաժողովները աշխատում են: Նաեւ հանդիպում ենք ունեցել ԱԱԾ տնօրենի հետ եւ պետք է հասնենք նրան, որ բոլորին բոլորի հետ փոխանակենք: Խոսքը մասունքների մասին է: Ծնողը կհանգստանա, երբ որ իր երեխայի գոնե մասունքը գտնի, եթե պարզվի, որ զոհված է: Հողին կհանձնի եւ հանգստություն կգտնի»,- ասել էր Անդրանիկ Քոչարյանը:

Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, գիշեր-ցերեկը մեկ արած, ջանքեր է գործադրում Գյումրու եւ Փարաքարի արտահերթ ընտրություններում հաղթանակ ապահովելու համար: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ այս հարցում բոլոր մանրուքներով զբաղվում է Նիկոլ Փաշինյանը ու երկու մարզի մարզպետների հետ անդադար կապի մեջ է, որոնք էլ զեկուցում են, թե ինչ իրավիճակ է բնակիչների շրջանում, ինչ տպավորություններ ու պահանջներ կան: Դա է պատճառը նաեւ, որ օրումեջ ռեժիմով ՔՊ Վարչության արտահերթ նիստ է գումարվում, որի ժամանակ, Գյումրու եւ Փարաքարի նախընտրական ցուցակներից բացի, քննարկվում են նաեւ առաջիկա անելիքները: Փաշինյանը բոլոր հարցերին ինքն է անդրադառնում: Այս պահին ՔՊ-ական վարչության անդամներն ու մարզի «վերնախավը» Փաշինյանին համոզել են, որ ամեն բան կարգին է, ընդդիմությունը ընտրվելու շանս չունի:

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2025 թ. փետրվարը 2024 թ. փետրվարի նկատմամբ) կազմել է 2.5%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.1%: Այս թվերը «Ժողովուրդ» օրաթերթը վերցրել է ՀՀ Վիճակագրական կոմիտեից: Թեեւ իշխանության ներկայացուցիչները խորհրդարանում ամպագոռգոռ թվեր են շռայլում՝ հղում անելով վիճակագրական կոմիտեին, այնուամենայնիվ ազնիվ գտնվող մի քանի ներկայացուցիչներ հստակ պնդում են, որ Վիճակագրական կոմիտեի թվերը ոչ միշտ է, որ համընկնում են ֆինանսների նախարարության կամ, օրինակ, Կենտրոնական բանկի ներկայացրած տվյալների հետ: Այս ամենը մի կողմ դնելով՝ եկեք հասկանանք, թե սպառողական գների ինչ փոփոխություններ են եղել Հայաստանում: Համաձայն նույն Կոմիտեի՝ 2025 թվականի հունվար-փետրվար ամիսներին հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի 4.5%, իսկ 2025 թ. հունվարի համեմատ՝ 0.5% գնաճ: Հանրապետության դիտարկվող 7 բնակավայրերում 2025 թ. փետրվարին հունվարի համեմատ սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.1 - 0.9%-ով, 3-ում գրանցվել է 0.7 - 0.1% գնանկում, իսկ մեկում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 0.7%-ով: 2025 թ. փետրվարին 2024 թ. փետրվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է բրնձի՝ 1.8%, հացի՝ 2.8%, ալյուրի՝ 4.3%, իսկ 2025 թ. հունվարի համեմատ՝ համապատասխանաբար 1.6%, 0.3%, 0.3% գնաճ:

ԳՅՈՒՄՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՔՊ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ ԱՐԳԵԼԵԼ ԵՆ ԽՈՍԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ խմբակցության մի խումբ պատգամավորներ դիմել են խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանին եւ քարտուղար Արթուր Հովհաննիսյանին, որպեսզի վերջիններս լռեցնեն ու սաստեն գյումրեցի ՔՊ-ական պատգամավոր Էմմա Պալյանին, ով օրը մի քանի անգամ գրառումներ է անում Գյումրու ընդդիմադիր թեկնածուների մասին, վիրավորում եւ պիտակավորում՝ «ջեբկիր», «ծաղրածու» անվանելով նրանց: ՔՊ ղեկավարության նախատումներից հետո էլ Էմմա Պալյանը լռել է արդեն 5 օր է, եւ ոչ մի գրառում չի անում: Միայն կիսվում է ՔՊ-ական թեկնածու Սարիկ Միսայանի նյութերով, մարզպետի տեսանյութերով: Նրան ասել են՝ եթե ուզում ես օգնել Սարիկ Միսայանին, լռի՛ր: Իհարկե, նախօրեին նա ԱԺ ամբիոնից մի ելույթ կարդաց, որը թերեւս նախապես համաձայնեցրել էր խմբակցության ղեկավարության հետ, նոր միայն կարդում էր ամբիոնից:



Պարզվում է՝ ՔՊ-ական Էմմա Պալյանի համար «ծաղրածու», «ջեբկիր» բառերը վիրավորական չեն, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նա ասաց, թե իրեն չեն արգելել գրառումներ անել, եւ եթե անհրաժեշտ լինի, շարունակելու է նման բովանդակությամբ գրառումները: Այս հարցերի վերաբերյալ «Ժողովուրդ»-ը զրուցել է պատգամավորի հետ:

-Տիկին Պալյան, Դուք ակտիվորեն գրառումներ եք անում Գյումրիում տիրող իրավիճակի մասին: Ընտրությունների վերաբերյալ կարծիքներ եք հայտնում, թեկնածուների մասին նույնիսկ վիրավորական արտահայտություններ եք անում՝ նրանց «ծաղրածու», «ջեբկիր» անվանելով: Նկատեցինք, որ արդեն քանի օր է գրառումներ չեք անում: Պատճա՞ռ կա: Ավելի հստակեցնենք. տեղեկություններ ունենք, որ Ձեր թիմակիցներից մի խումբ պատգամավորներ դիմել են Հայկ Կոնջորյանին եւ Արթուր Հովհաննիսյանին, որպեսզի նրանք Ձեզ սաստեն, որ նման գրառումներ չանեք: Ի՞նչ կասեք:

-Հերթական սուտն է ու իրականությանը չհամապատասխանող տեղեկություն: Մենք՝ պատգամավորներս, ազատ ենք մեր գործունեության մեջ:

Այսինքն, պետք է 5 րոպեն մեկ գրառում անենք, որ նման հարց չտա՞ք:

-Ձեր թիմակիցները դիմել են, ասել, որ նման բառապաշարով գրառումները վնասում են հենց Ձեր թեկնածուին եւ Ձեր թիմին:

-Նորից եմ կրկնում՝ պատգամավորներս ազատ ենք մեր գործունեության մեջ, այլ տարբերակ լինել չի կարող: Ձեր նշած տեղեկությունը բացարձակ սուտ է եւ անգամ որեւէ հնչին աղերս չունի իրականության հետ: Հարկ եղած դեպքում՝ ես ինքս կարող է օրական 20 գրառում անեմ, եւ հաջորդ մի քանի օրերին կարող է որեւէ գրառում չլինի իմ էջում:

-Չե՞ք կարծում, որ նույնիսկ այդ քննադատությունները պետք է չափավոր լինեն, քանի որ վիրավորական արտահայտությունները, անգամ քաղաքական մրցակցության դեպքում, այնքան էլ ճիշտ չեն:

-Ես ամենայն հարգանքով եմ վերաբերվում Ձեր եւ բոլոր լրագրող գործընկերներին, բայց ես ուզում եմ՝ մեկընդմիշտ այս թեման փակենք: Պատգամավորների շրջանում ու առհասարակ մեր քաղաքական թիմում չկա խոսքի որեւէ սահմանափակում: Դա բնավ չի համապատասխանում իրականությանը: Մենք ազատ ենք, եւ Ձեր նշած խոսույթն ի պատասխան է այս մարդկանց պահվածքին: Դա միայն ես չեմ ասում, դա գյումրեցիների գերակշիռ մասն է ասում: Այն մարդիկ, որոնք իրենց կպահեն տվյալ կերպ, թե՛ իմ էջերում, թե՛ իմ գործընկերների էջերում դուք կտեսնեք նման արձագանք: Եթե անձը քաղաքական հարթակը շփոթում է թատերական ներկայացման հետ, ապա ես իրավունք ունեմ նման գնահատական տալու: Իրականում տպավորություն է, որ որոշ մարդիկ ինչ-որ տեղ թափուր ծաղրածուի հաստիքի մասին հայտարարություն են տեսել եւ շփոթել են Գյումրիում սպասվող ՏԻՄ ընտրությունների հետ: Դա բավականին լուրջ քաղաքական պայքար է, լուրջ գործընթաց է, ու ես, լինելով քաղաքական գործիչ, սխալ եմ համարում այս ամենը անլրջացնելը: Այնպես որ, իմ սոցիալական էջերում համապատասխան գնահատական է հնչել այդ մարդկանց հասցեին, եւ որեւէ վիրավորական բան չեմ տեսնում այդտեղ:

-«Ծաղրածու»-ն վիրավորանք չե՞ք համարում:

-Ես նշեցի, որ դա ուղիղ գնահատական է տվյալ մարդու ցուցաբերած վարքագծին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՍԱՆԿՑԻԱՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ

ԿԱՐՈՂ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ՎՏԱՐԵԼ ԲԱՔՎԻՑ

«Դեռ չենք կարողացել կապ հաստատել ընտանիքի հետ, եւ չգիտենք՝ որքանով է Ռուբեն Վարդանյանը տեղյակ մեր խնդրանքի մասին: Այս հացադուլն իմ մասին չէ, ուղղակի խնդրանք է Ռուբեն Վարդանյանին, որ ողջ մնա»: Այս մասին հայտնել է «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մանե Թանդիլյանը: «Ես վստահ էլ չեմ, որ իմ հացադուլի մասին իմանալուց հետո նա կդադարեցնի իր հացադուլը, որովհետեւ ոչ մեկս չգիտենք՝ իրականում ինչ է կատարվում այնտեղ»,-հավելել է Թանդիլյանը:

Մանե Թանդիլյանի խոսքով՝ նախօրեին իր ինքնազգացողությունը վատացել էր, եւ հիվանդանոց էր տեղափոխվել, սակայն որոշակի բժշկական օգնություն ստանալուց հետո՝ ուշ երեկոյան, վերադարձել էր Ազատության հրապարակ: «Ճնշումս էր իջել, հաճախասրտություն ունեի, որոշակի բժշկական օգնություն ստացա ու վերադարձա, հիմա ավելի լավ եմ»,- ասաց նա:

Այն հարցին՝ չի՞ պատրաստվում դադարեցնել հացադուլը՝ հաշվի առնելով առողջական խնդիրները, Մանե Թանդիլյանը պատասխանել է. «Շատ ավելի վատ ինքնազգացողությամբ եւ առողջական ավելի վատ վիճակում է Ռուբեն Վարդանյանը Բաքվի բանտում, ու շարունակում է հացադուլը: Յուրաքանչյուր գիտակից մարդ պիտի հասկանա, որ ամեն օր իր համար մահացու է: Իմ խնդրանքն իր մեջ նաեւ ժամկետ ունի, ես խնդրել եմ, որ նա դադարեցնի հացադուլը, որովհետեւ հայ ժողովուրդն իր կարիքն ունի: Ինչքանով է հայ ժողովուրդը դա հասկանում՝ չգիտեմ, բայց ես, իմանալով, ինչ հայորդի է Բաքվի բանտում, ուղղակի ուզում եմ, որ նա ողջ մնա»:

Խոսելով այն մասին, որ Ադրբեջանը մտադիր է փակել ԿԽՄԿ ներկայացուցչությունն իր երկրում, եւ պատասխանելով հարցին՝ արդյոք դա միջոց է Բաքվում ապօրինաբար պահվող հայ գերիների նկատմամբ իրականացվող խոշտանգումները թաքցնելու, Մանե Թանդիլյանը պատասխանեց. «Ակնհայտ է, որովհետեւ գերիների ընտանիքները նրանց հետ կապ են հաստատում Կարմիր խաչի միջնորդությամբ: Եվ ինչ է սա նշանակում, Ալիեւին թույլատրված է անգամ միջազգային կառույցներին վտարել Բաքվից: Բա բան չունի՞ ասելու աշխարհը, իսկ ո՞ր են սանկցիաները: Պետք է օր առաջ կիրառել երկրի վրա, որը հանդգնում է միջազգային կառույց վտարել իր երկրից»:

ՀԱՍՏԱՏԵԼ Է

Արցախի Պաշտպանության Բանակի նախկին հրամանատարի տեղակալ Դավիթ Մանուկյանը երեկ իր ու Արցախի ռազմաքաղաքական ներկայացուցիչների դեմ հարուցված շինծու քրեական գործի շրջանակում ցուցմունք է տվել Բաքվի դատարանում:

Ադրբեջանական ԶԼՄ-ների փոխանցմամբ՝ նա հաստատել է, որ Հայաստանի զինված ուժերում զբաղեցրել է բարձրաստիճան պաշտոն, ունի գեներալ-մայորի կոչում, կռվել է Ադրբեջանին զինուժի դեմ: Մանուկյանը, իբրեւ թե, հայտարարել է, որ հրազենը, որը հետագայում հայտնաբերվել է իր տանը, հաշվառված է եղել Հայաստանի ոստիկանությունում: Զինվորականը նշել է, որ 44-օրյա պատերազմի ժամանակ իր մեքենան խոցվել է «Բայրաքթար»-ով, ինչի հետեւանքով իր վարորդը վիրավորվել է, ինքը չի տուժել, քանի որ մեքենայից 20 մետր այն կողմ է գտնվել:

ԱԼԻԵՎԸ ԽՈՍԵԼ Է ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

«Նախիջեւանը Ադրբեջանի պատմական տարածքն է, որն ավելի քան մեկ դար անջատված է Ադրբեջանի հիմնական մասից եւ չունի ցամաքային կապ՝ խորհրդային վարչակազմի կողմից «Արեւմտյան Զանգեզուրը» Ադրբեջանից անջատելու եւ Հայաստանին փոխանցելու պատճառով»: Այս մասին Թուրքիայում հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Նրա խոսքով՝ սա լուրջ «անարդարություն» է:

«Ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակ Հայաստանը շրջափակել էր Նախիջեւանը: Հայերը ցանկանում էին «օկուպացնել» Նախիջեւանը, «ինչպես արեցին Ղարաբաղի դեպքում»: Հայրս՝ Հեյդար Ալիեւը, որն այն ժամանակ Նախիջեւանի ղեկավարն էր, դա թույլ չտվեց: Նախիջեւանը չգրավելու պատճառներից մեկը Նախիջեւանի եւ Թուրքիայի միջեւ Հույսի կամուրջի կառուցումն էր: Թուրքիայի օգնությունը նշանակալի ներդրում է ունեցել Նախիջեւանի անվտանգության գործում», - ասել է Ալիեւը: Նախիջեւանը Հայաստանի առաջին հանրապետության մասն է եղել: Սակայն 1921-ի մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանը եւ Թուրքիան Մոսկվայում կնքել են պայմանագիր, ըստ որի՝ Նախիջեւանը հանձնվել է Խորհրդային Ադրբեջանին: Այժմ Նախիջեւանը հայաթափված է եւ բռնակցված Ադրբեջանի Հանրապետությանը:

ՀԱՄԵՄԱՏԵԼԻ ՉԵՆ

Ոչ ոք Հայաստանին անվտանգության երաշխիքներ չի տվել, որոնք համեմատելի են ռուս-հայկական հարաբերություններում եղածի հետ: Այս մասին ասել է Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը: Դիվանագետի խոսքով՝ ամեն դեպքում ինքը տեղյակ չէ այս մասին վկայող փաստաթղթերից կամ հայտարարություններից: Դեսպանը հավելել է, որ անվտանգության ոլորտում հայ-ռուսական երկկողմ հարաբերությունների հիմնական բաղադրիչները նույնն են՝ կա բազա, կան սահմանապահներ՝ իրենց ներկայության որոշակի դինամիկայով, նրանք շարունակում են ծառայել սահմանին: «Որքան ես հասկանում եմ, սա բարձր է գնահատվում Հայաստանի ղեկավարության կողմից»,- նշել է դեսպանը: Անդրադառնալով Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելությանը՝ Սերգեյ Կոպիրկինը հիշեցրել է, որ Մոսկվան բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը. «Մենք համոզված ենք մեր դիրքորոշման ճշտության մեջ, այդ թվում՝ արեւմտյան գործընկերների հետ հարաբերությունների փորձի հիման վրա, բայց դա Հայաստանի որոշումն է»:

Պատասխանելով ռազմատեխնիկական ոլորտում համագործակցության մասին հարցին՝ դեսպանն ասել է, որ այդ թեման օրակարգային է: Նրա խոսքով՝ այս ոլորտում շատ մեծ տեղեկատվություն է կուտակվել: Ռուսական կողմում կա քաղաքական կամք եւ ցանկություն՝ պահպանելու այն, ինչ կա: «Հարցերը քննարկվում են, լուծումներ են որոնվում», - եզրափակել է դեսպանը:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր խոշորացված համայնքի սեփականության իրավունքն է գրանցվել Մալիշկա բնակավայրում գտնվող՝ 7,000 քմ (0,7 հա) ընդհանուր մակերեսով «գյուղատնտեսական» նպատակային նշանակությամբ 4 հողամասերի նկատմամբ: Հիշեցնենք, որ 2024 թվականի դեկտեմբերի 27-ին Հակակոռուպցիոն դատարանը բավարարել էր Գլխավոր դատախազության՝պետական շահերի պաշտպանության հայցը, որով անվավեր էր ճանաչել Վայոց ձորի Եղեգնաձոր խոշորացված համայնքի Մալիշկա բնակավայրում գտնվող չորս հողամասերի՝ 2006-2007 թվականների աճուրդներն ու վերականգնել էր դրանց նկատմամբ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր խոշորացված համայնքի սեփականության իրավունքը:

ՀԱՊԿ-ԻՑ

ԿԱՊԵՐ Է ՊԱՀՊԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Իմանղալի Թասմաղամբետովը հայտարարել է, որ կազմակերպությունն աշխատանքային կապեր է պահպանում Հայաստանի հետ: Այս մասին ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը հայտնել է, ռուսական «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում՝ անդրադառնալով կազմակերպության եւ Հայաստանի միջեւ համագործակցությանը:

«Մենք աշխատանքային կապեր ենք պահպանում Երեւանի հետ: Ուզում եմ եւս մեկ անգամ շեշտել, որ Հայաստանի Հանրապետությունը մնում է դաշնակից, եւ կազմակերպության պարտավորությունները երկրի նկատմամբ պահպանվում են»,-նշել է Իմանղալի Թասմաղամբետովը: Անդրադառնալով ՀԱՊԿ-ի հետ համագործակցությունը վերսկսելու պատրաստակամության մասին Հայաստանից ստացված հնարավոր ազդանշաններին՝ Թասմաղամբետովը հայտարարել է, որ հարաբերությունների ձեւաչափը չի փոխվել եւ մնում է նույնը: Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2024 թվականի փետրվարին հայտարարել էր, որ Հայաստանը սառեցրել է իր մասնակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության աշխատանքներին:

«Ես գնահատում եմ, որ ՀԱՊԿ-ը չի կատարել անվտանգային ոլորտի պարտավորությունները Հայաստանի նկատմամբ, մասնավորապես 2021 թվականին, 2022 թվականին, եւ դա չէր կարող անցնել առանց հետեւանքների: Եվ հետեւանքն էլ այն է, որ մենք գործնականում, ըստ էության, սառեցրել ենք մեր մասնակցությունը ՀԱՊԿ-ում»,- հայտարարել էր Փաշինյանը:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ) պատրաստ կլինի առաջարկելու օգնության զանազան տարբերակներ, եթե Եվրամիությունը զինվորականներ ուղարկի Ուկրաինա: Այդ մասին հայտարարել է կազմակերպության գլխավոր քարտուղար Իմանղալի Թասմաղամբետովը «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում: «Բնավ առաջին անգամ չէ, որ Եվրոպայի մայրաքաղաքներում քննարկում են Ուկրաինա զորակազմ ուղարկելու հնարավորության հարցը: Սակայն մինչ օրս այդ զորակազմերը պաշտոնապես ներկա չեն այնտեղ: Պատճառն այն է, որ դա կարող է վտանգավոր իրադրություն ստեղծել տարածաշրջանի մասշտաբներով: Նման ռիսկերի հայտնվելու դեպքում ՀԱՊԿ-ը պատրաստ կլինի օգնության զանազան տարբերակներ առաջարկել կազմակերպության կանոնադրական փաստաթղթերով նախատեսված շրջանակներում եւ, իհարկե, որոնք հավանության կարժանանան բոլոր անդամ պետությունների կողմից», - հայտնել է Թասմաղամբետովը: Նրա խոսքով՝ Եվրամիության բնակչությունը կարող է հավանություն չտալ զորքեր ուղարկելու՝երկրների կառավարությունների որոշմանը: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը նշել է, որ նման իրավիճակը կարող է բեռ դառնալ հասարակության համար, նույնիսկ եթե այդ զորակազմերը գործի չդրվեն հարձակողական գործողություններում, այլ սկսեն կատարել ոստիկանական կամ հսկողական գործառույթներ:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԱՏԱՎՈՐԸ ՀԱՅՏՆԻ Է

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Էդգար Ղազարյանի դեմ հարուցված քրեական գործը քննող դատավորի անունը հայտնի է: Գործը մակագրվել է դատավոր Սաթենիկ Անդրեասյանին: Ըստ մեղադրական եզրակացության՝ Էդգար Ֆերդինանդի Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ քննված գործի ընթացքի եւ նշված գործով 2024 թվականի սեպտեմբերի 26-ին կայացված ՍԴՈ-1749 որոշման կապակցությամբ 2024 թվականի օգոստոսի 28-ից մինչեւ 2024 թվականի հոկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում հրապարակել է «Սահմանադրական դատարանի դատավորներին եւ արատավորող, նրանց իրավունքներին ու օրինական շահերին վնաս պատճառող տեղեկություններ:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆ ԱԶԱՏՎԵՑ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Եղիշե Կիրակոսյանին ազատվել Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի պաշտոնից: «Ղեկավարվելով «Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ եւ «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 26-րդ մասերով՝ Եղիշե Կիրակոսյանին ազատել Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի պաշտոնից»,-նշված է որոշման մեջ:

ԿՑՈՐԴ ԿՈՒՆԵՆԱ

Հայաստանը ԵՄ-ում պաշտպանության հարցերով կցորդ կունենա: Որոշման նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության երեկվա նիստում: Պաշտպանության հարցերով կցորդի նստավայրը Բելգիայի Թագավորությունն է՝ Բրյուսել քաղաքը: Համաձայն հիմնավորման՝ կցորդը իրականացնելու է միջազգային կազմակերպության, ինչպես նաեւ անդամ պետությունների միջեւ ռազմական եւ ռազմաքաղաքական համագործակցության համադրման եւ կոորդինացման աշխատանքները, կամրապնդի փոխգործակցության մակարդակը, ինչպես նաեւ կներկայացնի համագործակցության հեռանկարային զարգացման վերաբերյալ առաջարկություններ:

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՀՈՍՊԻՏԱԼ

ՄԻՊ ներկայացուցիչները այց են իրականացրել ՀՀ ՊՆ Երեւանի կայազորային հոսպիտալ: Հերթական այցի նպատակն էր տեղում դիտարկել հոսպիտալ տեղափոխված զինծառայողի իրավունքների վիճակը, ինչի կապակցությամբ ստացվել էր նաեւ ահազանգ: Այցի ընթացքում ՄԻՊ ներկայացուցիչները հանդիպել են հոսպիտալի ղեկավար անձնակազմի, զինծառայողին բուժող բժշկի հետ, առանձնազրույց ունեցել զինծառայողի հետ, որի ընթացքում պարզաբանվել են իր իրավունքների իրացման հնարավորությունները: Բուժանձնակազմի հետ քննարկվել են զինծառայողի բուժման ու փորձաքննության հետ կապված հարցեր: Զինծառայողների առողջական վիճակի եւ պատշաճ բուժօգնության հետ կապված հարցերը գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո, զինվորական հոսպիտալներ այցերը կրում են շարունակական բնույթ:

ՔԱՅԼԵՐ ՉԻ ԱՐԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԸ ԴԻՄԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

«ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պետք է համաչափ եւ խելամիտ ջանքեր գործադրի իմ պաշտպանյալ Ռուբեն Վարդանյանին եւ Ադրբեջանում կալանավորված մյուս հայ քրիստոնյա քաղբանտարկյալներին ու ռազմագերիներին ազատ արձակելու համար», - այս մասին X-ում գրել է օկուպացված Արցախի Հանրապետության նախկին պետնախարար, Բաքվի բանտում ապօրինաբար պահվող Ռուբեն Վարդանյանի փաստաբան Ջարեդ Գենսերը:

Կից փաստաբանը հրապարակել է ցանկ՝ներկայացնելով իր 25 տարվա փորձի ընթացքում այլ երկրների կառավարությունների ձեռնարկած քայլերը, որոնց նպատակն է եղել ազատ արձակել օտար երկրներում պահվող պատանդներին:

«Անշուշտ, հայ պատանդներն արժանի են առնվազն այնքան օգնության, որքան մյուս կառավարություններն են ապահովում, այնպես չէ՞: Օրինակ, երբ ես ներկայացնում էի Իրանում պահվող երկու գերիների՝ Սիամակ Նամազիի եւ նրա հոր շահերը, Միացյալ Նահանգները նշանակել է նախագահի հատուկ բանագնաց պատանդների հետ կապված հարցերով, Սպիտակ տունը եւ Պետքարտուղարությունը պարբերաբար հանդիպել են իմ հաճախորդների ընտանիքի հետ, ԱՄՆ-ն Իրանում Շվեյցարիայի դեսպանատանն ուներ ԱՄՆ շահերի բաժին, որը զբաղվում էր բանտային պայմանների բարելավման հարցով եւ փորձում էր վերահսկել դատավարությունները, նախագահը եւ պետքարտուղարը հրապարակայնորեն բարձրաձայնել են թեմայի վերաբերյալ, ԱՄՆ դիվանագետները հանդես են եկել հրապարակային ելույթներով, ԱՄՆ դիվանագետները, իրենց դաշնակիցների հետ, հարցն առաջ են տարել ՄԱԿ-ում՝ օգնության խնդրանքով, ԱՄՆ աջակցություն է խնդրել համաշխարհային կրոնական առաջնորդներից, պատժամիջոցներ է սահմանել պատանդ վերցնելու համար պատասխանատու իրանցի պաշտոնյաների նկատմամբ:

Այս ամենը ողջամիտ եւ համաչափ էր Միացյալ Նահանգների համար: Այնուամենայնիվ, ի զարմանս ինձ, որքանով ես կարող եմ ասել, Հայաստանը այս տարրական բաներից ոչ մեկը չի արել Ադրբեջանում պահվող հայ պատանդների համար: Այսպիսով, հարց եմ հղում վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ համաձա՞յն եք, որ այս քայլերը խելամիտ եւ համաչափ են, թե՞ իսկապես կարծում եք, որ նմանօրինակ ջանքերը, որոնք ձեռնարկել է նախագահ Դոնալդ Թրամփը՝ Մարկ Ֆոգելի նմաններին եւ ԱՄՆ մյուս քաղաքացիներին Բելառուսից եւ Վենեսուելայից վերադարձնելու համար, ոչ խելամիտ եւ անհամաչափ էին», - գրել է Գենսերը:

Հիշեցնենք, որ Ադրբեջանը Ռուբեն Վարդանյանին մեղադրում է «խոշտանգումների», «շահադիտական գործունեության», «պատերազմի օրենքների խախտման», «ահաբեկչության», «ահաբեկչության ֆինանսավորման» համար: Նշենք, որ շինծու դատավարության գործընթացը մեկնարկել էր հունվարի 17-ին: Վարդանյանը հայտարարել է հացադուլ: Ընդհանուր առմամբ դատարանի առաջ կանգնել է 15 հայ՝ Արցախի նախկին նախագահներ Արայիկ Հարությունյանը, Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, Պաշտպանության բանակի ՋՈՒ շտաբի նախկին պետ Դավիթ Մանուկյանը, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, քաղաքացիական անձինք՝ Վասիլի Բեգլարյանը, Էրիկ Ղազարյանը, Դավիթ Ալավերդյանը, Գուրգեն Ստեփանյանը, Լեւոն Բալայանը, Մադաթ Բաբայանը, Գարիկ Մարտիրոսյանը, Մելիքսեթ Փաշայանը:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱԳՐԱՏՅԱՆՆ ԱՐԴԱՐԱՑՎԵՑ

Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, դատավոր Մանվել Շահվերդյանի նախագահությամբ, երեկ հրապարակեց ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի գործով վերդիկտը՝ արդարացնելով Բագրատյանին մեղսագրվող արարքում: Հիշեցնենք, որ Հ. Բագրատյանին մեղադրում են բռնության կոչեր անելու համար, որոնք, ըստ իրավապահների, արվել են ապրիլի 4-ին՝ ԱԺ-ի մոտ «Միասին» շարժման հրավիրած հանրահավաքում ունեցած ելույթի ժամանակ: Ելույթում Բագրատյանը նշել էր. ««Այդ ընթացքում իրենք բաժանել են 200 մլրդ դրամի կամ 500 մլն դոլարի պրեմիա: Ծախսել է 28 մլրդ, 28 մլրդ-ն ի՞նչ ես արել, 1 մլրդ-ը չէի՞ր կարող դնել բանակի վրա... 5 տարում մահանում է 36 հազար մարդ, այդ թվերի մեջ մտած չեն Covid-ն ու զոհվածները: Ծննդաբերությունը նվազում է: Եթե 2017-ին ունեցել ենք 18 հազար իրավական հանցագործություն, անցյալ տարի ունեցել ենք 37 հազար: Ինչո՞ւ եք կոտորվում: Եթե 2017-ին կյանքի միջին տեւողությունը Հայաստանում եղել է 76 տարի, իր օրոք 5 տարում դառել է 72 տարի: Ինչո՞ւ եք մեռնում, վերացրեք այդ մարդուն, վերջացրեք: Վերացրե՛ք այդ իշխանությունը ձեր ուժով, թափով: Այս ի՞նչ ինքնասպանություն է, որին ազգը գնում է»:

Նշենք, որ քրեական հետապնդումը Բագրատյանն ինքը շինծու է համարում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՉԻ ԽՈՍՈՒՄ

Կան հարցեր, որոնց վերաբերյալ չի կարելի խոսել հրապարակային, որովհետեւ դա կարող է սկզբունքի խախտում լինել. միջազգային հարթակներում այս խնդիրների լուծումը նրանով չի պայմանավորված, թե ինչքան բարձր ես խնդրի վերաբերյալ խոսում կամ ինչքան վիրավորանքներով լի արտահայտություններով ես խոսում, դա պետք է ունենա ճիշտ մարտավարություն: Այս մասին ասել է ՄԻՊ Անահիտ Մանասյանը՝ անդրադառնալով հարցին, թե ՄԻՊ-ը կոնկրետ ի՞նչ քայլեր է ձեռնարկում Բաքվում գտնվող հայ գերիների, պատանդների եւ պահվող մյուս անձանց վերադարձնելու համար:

«Ես ոչ միայն հաղորդակցության մեջ եմ միջազգային գործընկերների հետ, այլ նաեւ հստակ իրավական վերլուծություններ եմ այս խնդրի հետ կապված անում: Մի մասին դուք էլ եք ծանոթ, որովհետեւ հրապարակային խոսել եմ դրա վերաբերյալ, բայց մի մասը հնարավոր չէ հրապարակային ներկայացնել՝ այդ թվում նշված անձանց եւ նրանց ընտանիքների անդամների հետ կապված զգայունության հանգամանքը նկատի ունենալով: Ողջունում եմ Մարդու իրավունքների ՄԱԿ-ի հանձնակատարի շատ կարեւոր հայտարարությունը եւ հույս ունեմ, որ ապագայում նման ոչ միայն հայտարարություններ, այլ նաեւ նման խոսույթ շատ կինչի, որը կարող է ազդեցություն ունենալ Ադրբեջանի համար»,- նշել է նա: Հարցին էլ՝ի վերջո քաղաքական միջամտություն է պետք, թե իրավական, նա ասել է. «Իրավականն այս պարագայում, բնականաբար, շատ կարեւոր հնարավորություն եւ միջոց է քաղաքական հարթակներում կոնկրետ նպատակներին հասնելու համար»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴԱՆԱԿ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Մարտի 6-ին՝ կեսգիշերն անց, ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն «Վարդենիս» բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել, որ «մեջքի կտրած-ծակած, արնահոսող բազմակի վերքեր» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Մեծ

Մասրիկ գյուղի 28-ամյա մի բնակիչ: Համայնքային ոստիկանության Վարդենիսի բաժնից օպերատիվ խումբ է մեկնել: 28-ամյա երիտասարդը հայտնել է, որ մարմնական վնասվածքը ստացել է տան բակում սայթաքելու եւ երկաթների վրա ընկնելու հետեւանքով: Վարդենիսի համայնքային ոստիկանների եւ Գեղարքունիքի մարզային վարչության քրեական ոստիկանների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ մարտի 5-ին՝ ժամը 23:00-ին, 46-ամյա հայրը եւ 18-ամյա որդին իրենց տան մոտ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ ծեծել են 28-ամյա համագյուղացուն, այդ ընթացքում էլ 18-ամյա երիտասարդը խոհանոցային դանակով հարվածել է նրան: 18-ամյա երիտասարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Վարդենիսի բաժին: Նրա մոտ հայտնաբերվել է հանցագործության գործիք դանակը:

Երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին:

ԵՐԵԽԱՆ ԸՆԿԵԼ Է ՊԱՏՈՒՀԱՆԻՑ

Երեկ արտակարգ դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում:

Ժամը 11:25-ի սահմաններում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Կոտայքի մարզային քրեական վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Ջրվեժ գյուղի միջնակարգ դպրոցից ծայրահեղ ծանր ախտորոշմամբ երեխա է տեղափոխվել «Ուիգմոր» բժշկական կենտրոն: Հիվանդանոց տեղափոխվածը նշված դպրոցի սաներից է՝ 13 տարեկան տղա, ով 3-րդ հարկում գտնվող դասարաններից մեկի պատուհանից ընկել է: Մինչ շտապօգնության գալը, դպրոցի կոլեկտիվն է փորձել բուժօգնություն ցուցաբերել, ապա ժամանած շտապօգնության բժիշկները տեղում բուժօգնություն են ցուցաբերել տղային, ապա տեղափոխել հիվանդանոց: Բժիշկները երեխայի վիճակը գնահատում են ծայրահեղ ծանր:

Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում են դեպքի հանգամանքները: Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են հիվանդանոց տեղափոխվածի ինքնությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 5-ից 6-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 149 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽՈՍՏԱՅԵԼ ԷԻՆ 5 ԴՊՐՈՑ ԿԱՌՈՒՑԵԼ

Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ մարզի հանրակրթական 10 դպրոցների շենքեր ունեն հիմնանորոգման, 32-ը՝ վերանորոգման (դասասենյակներ, միջանցքներ, մարզադահլիճներ) կարիք: Տավուշի մարզպետարանից նախկինում հայտնել են, որ «300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» պետական ծրագրով 2023-2024 թվականների ընթացքում Տավուշի մարզում կկառուցվի հանրակրթական դպրոցների 5 շենք, սակայն կառուցվել է ընդամենը 2 դպրոցի շենք՝ Իջեւան համայնքի Գանձաքար եւ Կիրանց գյուղերում: Գանձաքարում 480 աշակերտի համար նախատեսված միջնակարգ դպրոցի նոր շենքի արժեքը 1 միլիարդ 822 միլիոն դրամ է, շենքը նախատեսվում էր գործարկել 2023թ. ամռանը, սակայն գործարկվեց 2025-ի հունվարի սկզբին: Կիրանց գյուղում 100 աշակերտի համար նախատեսված դպրոցի մոդուլային շենքի արժեքը 680 միլիոն դրամ է, այն նախատեսված էր շահագործման հանձնել 2024 թվականի մարտին, սակայն շահագործման հանձնվեց 2024-ի սեպտեմբերի սկզբին: Սահմանամերձ Դովեղ գյուղում 100 աշակերտի համար նախատեսված միջնակարգ դպրոցի մոդուլային շենքը նախատեսվում էր գործարկել 2024թ. հունիսի կեսին, սակայն աշխատանքները վաղուց դադարեցված են, գործի մեկ երրորդ մասն է արված: 2023 թ. ապրիլի 29-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզ այցելության ընթացքում եղել էր Դովեղի դպրոցի շինհրապարակում, շինարարներին հորդորել էր շինաշխատանքները ըստ ժամանակացույցի կատարել:

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐԸ ՀՈՂԱՄԱՍ Է ՏՎԵԼ ԳՐՔԻԿՅԱՆԻՆ

Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը գիրք նվիրելու օրը՝ փետրվարի 19-ին, գրքի փոխարեն Երեւանի բնակիչ Գրքիկյանին շուկայականից զգալի չափով էժան գնով հողամաս է տվել: Դիլիջան համայնքի ղեկավար Դ. Սարգսյանի՝ 2025թ. հունվարի 16-ի թիվ 38-Ա որոշմամբ 2025թ. փետրվարի 17-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 1301.8 քմ հողամաս (Լոտ-114 (ՔՀ-24)) Դիլիջան քաղաքի Շամախյան փողոց, թիվ 41/4 հասցեում բնակելի կառուցապատման նպատակով, 9 11 2600 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 9 112 600 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւան քաղաքի Բելյակովի փողոց, 5 շենք, թիվ 44 բնակարանի բնակիչ Վարդան Գրքիկյանը, որի մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 6 արձանագրությունը: Փետրվարի 19-ին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշել է հաստատել Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի թիվ 6 արձանագրությունը եւ 1301.8 քմ մակերեսով հողամասը բնակելի կառուցապատման նպատակով օտարել Երեւանի բնակիչ Վարդան Գրքիկյանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՏԱՔԻՆ

ԹՐԱՄՓԸ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ Է ԴՐԵԼ

ՆԱՏՕ երկրների միջեւ հետախուզական տվյալների փոխանակումը վտանգի տակ է, քանի որ դաշինքի անդամներն ավելի են զգուշանում միմյանցից, իսկ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հրահրած «երկրաշարժը» կարող է վաթարացնել իրավիճակը, գրել է Politico-ն՝ հղում կատարելով դաշինքի եւ նրանց անվտանգության ծառայությունների ներկայացուցիչներին: Ինչպես նշել է լրատվամիջոցը, վաղուց լարվածություն կա դաշինքի ավանդական արեւմտյան անդամների եւ նախկին կոմունիստական արեւելքի եկվորների միջեւ անվստահության պատճառով:

Իրավիճակը վատթարացավ Ուկրաինայում պատերազմի բռնկումից հետո, երբ ռուսամետ Հունգարիան, որին վերջերս միացավ Սլովակիան, սկսեց ընկալվել որպես անվստահելի՝ ըստ ՆԱՏՕ եւ անվտանգության ութ ներկա եւ նախկին պաշտոնյաների, որոնք գիտեն դաշինքի ներսում հետախուզական տվյալների փոխանակման մասին:

Բայց այժմ ԱՄՆ շրջադարձը դեպի Ռուսաստան Թրամփի օրոք ցնցում է դաշինքի առանցքը՝ ստիպելով երկրներին դիտարկել Վաշինգտոնի հետ հետախուզական տվյալների փոխանակման ռիսկը, ասել են հինգ պաշտոնյաներ: ԱՄՆ հուսալիության շուրջ խառնաշփոթը սաստկացավ այս շաբաթ, երբ տեղեկություններ հայտնվեցին, որ այն ժամանակավորապես դադարեցրել է Ուկրաինայի հետ հետախուզական տվյալների փոխանակումը՝ փորձելով ճնշել Կիեւին Ռուսաստանի հետ բանակցություններում, ընդգծել է պարբերականը:

«ՆԱՏՕ սրահներում շատ շահարկումներ կան դաշինքի ներսում հետախուզական տվյալների փոխանակման ապագայի մասին»,- ասել է Ջուլի Սմիթը՝ մինչեւ նոյեմբեր ՆԱՏՕ-ում ԱՄՆ դեսպանը Ջո Բայդենի օրոք, ավելացնելով, որ «լսել է մտահոգություններ որոշ դաշնակիցներից», թե արդյոք Վաշինգտոնը կշարունակի հետախուզական տվյալների փոխանակումը դաշինքի հետ: Կանադայի արտաքին հետախուզության՝ CSIS-ի նախկին աշխատակից Դենիել Սթենթոնի խոսքով՝ «այն ժամանակ, երբ նրանք իսկապես ավելի շատ հետախուզական տվյալների կարիք ունենան, նրանք դրանցով կզբաղվեն ավելի քիչ»:

«Հետախույզները կարող են տեղեկություններ փոխանակել եւ զրուցել միմյանց հետ ուրիշների համար անհասանելի պայմաններում: Կրճատում մենք չենք տեսնում»,- ասել է մեկ այլ աղբյուր:

ՆԱՏՕ 32 անդամների միջեւ հետախուզական տվյալների փոխանակումը երբեք այնքան սերտ չի եղել, որքան Five Eyes դաշինքի միջեւ՝ հիմնականում կապված արտահոսքի վախի եւ կասկածների հետ, որ ռուսները կարող են ներթափանցել որոշ ազգային հետախուզական գործակալություններ, գրել է Politico-ն:

Հետախուզական տվյալների փոխանակումը կարող է շատ արդյունավետ լինել, ինչպես եղավ, երբ Ջո Բայդենի վարչակազմը շեփորեց Ուկրաինայի վրա հարձակման Ռուսաստանի նախապատրաստությունները, ինչը կարեւոր նշանակություն ունեցավ դաշնակիցներին զգուշացնելու եւ համերաշխ արձագանքելու համար: Բայց երեք տարի անց, Թրամփի օրոք կտրուկ քաղաքական տեղաշարժով, ԱՄՆ հետախուզության ապագա դերը հարցականի տակ է: «Հիմա հարցն այն է, թե արդյոք հետախուզության փոխանակումը կմնա ՆԱՏՕ անդրատլանտյան աշխատանքի առանցքային տարրը, հաշվի առնելով դաշնակիցների հարցերը, թե արդյոք ԱՄՆ-ն անաչառ է Ուկրաինայում պատերազմի եւ ապագա բանակցությունների հարցում»,- ասել է ՆԱՏՕ-ում ԱՄՆ դեսպանը 2021-2024թթ.:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՊԱՏԱՍԽԱՆԵԼ

Բաքվում ընթացող «դատավարության» ժամանակ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը հրաժարվել է պատասխանել իրեն ուղղված հարցերին: Այս մասին հայտնել է Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը: «Սա տրամաբանական է նրանով, որ մինչ այդ իր ուղերձով Վարդանյանը տեղեկացրել էր, որ նախաքննության փուլում իրեն ընդամենը մի անգամ են հարցաքննել եւ, ցուցմունքներ տալուց հրաժարվելուց հետո, իր անունից կեղծ ցուցմունքներ են գրվել: Կեղծ ցուցմունքների վրա հիմնված կեղծ դատավարություն, որը ծայրից ծայր քաղաքական է: Ադրբեջանի բանտերում գտնվող հայերի կյանքը սպառնալիքի տակ է, իսկ նրանց ֆիզիկական վիճակն ու հյուծվածությունը նույնիսկ լուսանկարներով/տեսանյութերով է տեսանելի: Դեռ չեմ խոսում այն մասին, որ նրանք գտնվում են ահաբեկչական երկրում, որտեղ շարժվում են ջունգլիի կանոններով»,- գրել է նա:

ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ

Երեկ ՀՀ ներքին գործերի նախարարության առաջարկով ընդունվել է որոշում, որով Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կկարողանան օտարերկյա պետությունների իրենց վարորդական վկայականները առանց որակավորման քննություններ հանձնելու փոխանակել ազգային վարորդական վկայականով: Նման կարգավորումը հնարավորություն կտա երկքաղաքացիություն ունեցող ՀՀ քաղաքացիներին առանց խոչընդոտների վարել տրանսպորտային միջոց Հայաստանի տարածքում:

ՀՀ քաղաքացիները, որոնք ունեն այլ երկրներում ստացած վարորդական վկայականներ, այլեւս չեն ենթարկվի վարչական պատասխանատվության, եթե այդ վկայականները համապատասխանում են միջազգային չափանիշներին: Կարգավորումը թույլ կտա երկքաղաքացիություն ունեցող անձանց առանց իրավական խոչընդոտների վարել իրենց տրանսպորտային միջոցները ՀՀ տարածքում: Մինչ այժմ Հայաստանի Հանրապետության վարչական օրենսգիրքը սահմանում էր, որ ՀՀ քաղաքացին չի կարող այլ երկրի վարորդական վկայականով վարել մեքենա Հայաստանի տարածքում, ինչը խնդիրներ էր առաջացնում այն քաղաքացիների համար, որոնք երկքաղաքացիություն ունեն եւ ժամանակավորապես այցելում են Հայաստան: Նախագծի ընդունմամբ ակնկալվում է լուծել այս խնդիրը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ազատ տեղաշարժի հնարավորությունը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 1 մարդ զոհվել է, 19-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԵՐԱԿԱ ՇԱՀ Է ՃԱՆԱՉՎԵԼ

Կառավարությունն իր նիստում Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրի 2-րդ փողոցի N 6 հասցեի հողամասի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշում է կայացրել: Հիմնավորման մեջ նշվում է, որ Բավրայում նախատեսվում է կառուցել դպրոցի նոր շենք, որի համար էլ անհրաժեշտություն է առաջացել հիշյալ հողամասի նկատմամբ ճանաչել հանրային գերակա շահ: Կառուցումն իրականացվելու է հասարակական նշանակության կառուցապատման համար նախատեսված՝ սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող 3 հողամասերի տարածքում: Այդ 3 հողամասերից 2-ի սեփականատերերը ցանկանում են իրենց պատկանող հողամասերը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը: Իսկ հողամասերից 3-րդի նկատմամբ (մակերեսը՝3850 քմ, սեփականատեր՝Շուշանիկ Փայլակի Իվանյան), առկա է 504 665 ՀՀ դրամի պահանջի չափով Հարկադիր կատարման ծառայության կողմից կիրառված արգելանք, ուստի անհրաժեշտություն է առաջացել նշված հողամասի նկատմամբ կիրառել հանրության գերակա շահ ճանաչելու մասին կարգավորումները:

ԹՌԻՉՔՆ ՈՒՇԱՑԵԼ Է

Ռուսական «Ազիմուտ» ավիաընկերության Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռը թռիչքից 40 րոպե անց վերադարձել է «Վնուկովո» օդանավակայան՝ տեխնիկական խնդիրների պատճառով: Այս մասին հայտնել է ուղեւորներից մեկը: Ըստ նրա՝ Մոսկվայի ժամանակով ժամը 08:40-ին ինքնաթիռը թռել է Մոսկվայի «Վնուկովո» օդանավակայանից, եւ թռիչքից 40 րոպե անց անձնակազմը հայտնել է, որ ինքնաթիռը վերադառնում է «Վնուկովո»՝ ինքնաթիռի տեխնիկական խնդիրների պատճառով: Ուղեւորը նշեց, որ իրենց այժմ տեղափոխել են նույն ավիաընկերության մեկ այլ ինքնաթիռ, որով էլ կվերադառնան Երեւան: Թռիչքը դեռ չի կայացել:

«ՅՈՒՆԻԲԱՆԿԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ՝ ՆՈՐ ՀԱՍՑԵՈՒՄ

Յունիբանկի «Վանաձոր» մասնաճյուղն այսուհետեւ կգործի Վանաձոր, Գրիգոր Լուսավորչի 38/3 հասցեում: Ժամանակակից դիզայնով ավելի ընդարձակ եւ հարմարավետ տարածքը հնարավորություն է տալիս ապահովելու մեծ թվով հաճախորդների արագ եւ բարձրակարգ սպասարկումը: Մասնաճյուղում տեղադրված է նաեւ վճարային տերմինալ՝ բանկային գործարքներն ինքնուրույն կատարելու համար: Մոբայլ հավելվածների զարգացմանը զուգահեռ՝ «Յունիբանկը» շարունակաբար արդիականացնում է իր մասնաճյուղային ցանցը՝ բանկային ծառայությունների հասանելիությունը մեծացնելու եւ հաճախորդներին իրենց համար նախընտրելի տարբերակով սպասարկում առաջարկելու համար:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՓԱԿՈՒՄ Է ԿԽՄԿ-Ն

ԻՆՉ ԿԱՐՈՂ Է ՁԵՌՆԱՐԿԵԼ ՀՀ-Ն ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ադրբեջանի իշխանությունները մսադիր են փակել Բաքվում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցչությունը, ինչի մասին մարտի 5-ին հայտարարել էր Բաքվում ԿԽՄԿ-ի գրասենյակի ղեկավարը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բաքվում ԿԽՄԿ-ի գրասենյակը այն հիմնական կառույցն էր, որի միջոցով հնարավոր էր լինում կապ պահել Բաքվում ապօրինի պահվող հայ գերիների հետ եւ տեղեկություններ իմանալ նրանց առողջական վիճակի եւ պահման պայմանների մասին՝ հարց է առաջանում, թե ինչպե՞ս է ապահովվելու կապը հայ գերիների հետ եւ ի՞նչ եղանակով են տեղեկություններ ստացվելու նրանց վիճակի մասին:

Ըստ միջազգային իրավունքի մասնագետ Սիրանուշ Սահակյանը ընդգծել է, որ Ադրբեջանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գրասենյակի գործունեության փակման պարագայում Բաքվում ապօրինի պահվող հայ գերիների հետ կոմունիկացիայի այդ խողովակն ամբողջովին դադարելու է, այն մեծացնելու է հոգեբանական տառապանքները եւ ստեղծելու է մեծ անորոշություն:

«Սա նշանակում է, որ Բաքվում պահվող հայերի ճակատագիրը մնում է բացառապես ադրբեջանական իշխանությունների քմահաճույքների տիրույթում, ինչը կարող է հավելյալ քաղաքական լծակ դառնալ Հայաստանի իշխանությունների նկատմամբ ճնշումներ գործադրելու համար»,- նշել է Սահակյանը:

Սահակյանը նկատել է, որ այս պահին միակ կառույցը, որը հնարավորություն ունի անմիջականորեն տեսակցել ռազմագերիներին, Կարմիր խաչի միջազգային կոմիտեն է, որը, չունենալով խոշտանգումների կանխարգելման մեխանիզմ, բոլոր դեպքերում մարդասիրական առաքելություն է իրականացնում, իսկ տեսակցությունները դրական ազդեցություն են թողնում այնտեղ պահվող հայ գերիների վրա:

Ըստ նրա՝ տրամաբանական է, որ Ադրբեջանում մարդու իրավունքների վիճակի վատթարացման, ժողովրդավարացման անկման տենդենցներին զուգահեռ հատուկ միջոցներ են ձեռնարկվում այդ վիճակն արձանագրող կառույցների գործունեությունը սահմանափակելու մասով, այսինքն, եթե կա վիճակի վատթարացում, պետք է կանխել այդ վիճակի վատթարացումն արձանագրող կառույցների ներկայությունը եւ նաեւ այդ վիճակի արձանագրումն ու փաստագրումը: «Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պարագայում ակնհայտ է դառնում ադրբեջանական կողմի թիրախավորված գործելակերպը, քանի որ գրասենյակի հիմնական գործունեությունը կապված է հակամարտության մարդասիրական հետեւանքները մեղմելու հետ, եւ այստեղ հիմնական շահառուն հայերն են՝ պայմանավորված Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ, իսկ Կարմիր խաչը, ըստ էության, ներպետական մարդու իրավունքների հարցերով ներգրավվածություն չունի»,- ընդգծել է միջազգային իրավունքի մասնագետը:

Խոսելով այն մասին, թե ինչ քայլեր կարող է անել հայկական կողմը Բաքվում ԿԽՄԿ-ի գրասենյակի փակվելու դեպքում՝ Սիրանուշ Սահակյանն ասել է, որ իրավիճակը մեղմող միջոցառում կարող է լինել խոշտանգումների հարցերով զբաղվող այլ կառույցների ներգրավվածությունը մեծացնելը, օրինակ՝ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն, որը գործում է Եվրոպայի խորհրդի շրջանակներում կամ խոշտանգման հարցերով ՄԱԿ-ի հատուկ մանդատագիրը: Նրա խոսքով՝ վերջիններս որոշակի պատասխանատվություն պետք է ստանձնեն, եւ չափազանց կարեւոր է նաեւ այլընտրանքային պայմանավորվածություններ ձեռք բերելը դիվանագիտական, հյուպատոսական հասանելիություն ապահովելու նպատակով:

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՐԱԹԱՓՈՒՄ Է ԵՂԵԼ

Երեկ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Մ-2 ավտոճանապարհից Ջերմուկ քաղաք տանող ճանապարհին տեղի է ունեցել քարաթափում, ճանապարհը դարձել է միակողմանի երթեւեկելի. առկա է հետագա քարաթափման վտանգ: Այս մասին հայտնում են ՆԳՆ փրկարար ծառայությունից: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատի օպերատիվ խումբը: Պարզվել է, որ Մ-2 ավտոճանապարհից Ջերմուկ քաղաք տանող հատվածի 2-րդ կմ-ին տեղի է ունեցել քարաթափում: Փրկարարները եւ պարեկային ծառայության աշխատակիցները քարերը հեռացրել են ավտոճանապարհի երթեւեկելի հատվածից՝դարձնելով այն երկկողմանի երթեւեկելի:

ՏԱՐԿԵՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2018-ից գործում է տարկետման համակարգ, որը տրամադրվում է Շանհայի վարկանշավորման համակարգի առաջին 50 բուհեր ընդունված ուսանողների համար: 2018 թվականից ի վեր 380 հոգի օգտվել է այդ համակարգից, նրանցից ավելի քան 330-ը դեռ սովորում է, իսկ 45-ը ավարտել է: Այդ մասին Կառավարության նիստին ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հետաքրքրվել է՝ ավարտած ուսանողներից քանիսն են վերադարձել ՀՀ, քանի որ եթե 45-ն էլ չեն վերադարձել, ապա արտոնությունը պետք է հանել: «Այս պահին հստակ տվյալ ունենք 19-ի վերաբերյալ, որոնք չեն վերադարձել, մյուսների հետ փորձում ենք, շարունակում ենք կապ հաստատել»,- ասել է նախարարը: Վարչապետի խոսքով՝ էական չէ՝ չվերադարձողները տղանե՞ր են, թե՞ աղջիկներ, քանի որ խնդիրը միայն զինվորական ծառայության անցնելը չէ: «Վերադարձածների վիճակագրությունը կտաք, եթե վերադարձածների վիճակագրությունը դեֆորմացված լինի, մենք այդ արտոնությունը հանում ենք: Կներեք, մենք այդքան ռեսուրս չունենք՝ զարգացած երկրների զարգացման համար ներդրում անելու: Իրենք իրենց զարգացման համար ներդրում անելու ձեւը կգտնեն», - ասել է վարչապետը:

Հիշեցնենք, որ քննարկումը ծավալվել է այն որոշման նախագծի համատեքստում, որով առաջարկվում է ուսանողների՝ արտերկրի բուհերում սովորելու կրթաթոշակային քաղաքականությունը վերանայել ֆինանսավորման տեսանկյունից: Այն է՝ պետությունը եւ տվյալ մասնագետի կարիքն ունեցող, առնվազն 100 աշխատող ունեցող ընկերությունը պետք է համաֆինանսավորեն տվյալ մասնագետի վերապատրաստման համար 50/50 համամասնությամբ: Կրթությունից հետո շրջանավարտը պետք է առնվազն 3 տարի աշխատի տվյալ կազմակերպությունում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՏՊԱՎՈՐՎԱԾ ԵՆ

«ՎԱԶԳԵՆ. ՎԵՐՋԻՆ ՍՊԱՐԱՊԵՏԸ» ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱՆ

Մարտի 5-ին՝ Վազգեն Սպարապետի ծննդյան օրը, «Կինոմոսկվա»-ում կայացավ հանդիսատեսի կողմից երկար սպասված «Վազգեն. Վերջին Սպարապետ» ֆիլմի պրեմիերան, որին ներկա էին ողջ ստեղծագործական խումբն ու Վազգեն Սարգսյանի ընտանիքի անդամներն ու բարեկամները: Կարմիր գորգի արարողությանն ու ֆիլմի նախադիտմանը ներկա է եղել նաեւ ArmLur.am-ը, պրեմիերայից հետո զրուցել դերասանական կազմի հետ ու առանձնացրել երեկոյի կարեւոր դրվագները:

«Ավելի լավ է մեկ մոմ վառել, քան հավերժ բողոքել խավարից: Օգնենք, որպեսզի յուրաքանչյուրը վառի իր մոմը, եւ համոզված եմ՝ մոտ ապագայում Հայաստանը կհայտնվի լույսի մեջ»,- ֆիլմի պրեմիերայից առաջ Սպարապետի խոսքերը մեջբերեց նրա կերպարը մարմնավորող Խորեն Լեւոնյանը: Արդեն պրեմիերայից հետո դերասանը դժվարացավ բառերով նկարագրել իր էմոցիաները:

«Շատ բարդ է, բայց հիմա ավելի հանգիստ եմ, քան մինչ պրեմիերան, անչափ լարված էի: Ֆիլմում նկարահանվելու առաջարկը ստանալուց հետո մինչ այս պահը ես լարված եմ ու չգիտեմ՝ դեռ որքան կշարունակվի: Դժվար ու դաժան է եղել, որովհետեւ ներքին հարցեր կան: Իմ ու կերտածս հերոսիս մեջ աշխարհայացքի նմանություններ եմ գտնում, այդ հարցերի պատասխաններն անդադար փնտրում եմ: Մենք սխալներ ունենք, որոնք կարծում եմ՝ պետք է ուղղենք»,- նշեց դերասանը:

Խորեն Լեւոնյանը նկատեց՝ մինչ այս ֆիլմում նկարահանվելը բոլորն ասում էին, որ շատ նման է իր պապիկին: «Ֆիլմից հետո բոլորն ասում են՝ ինչ նման ես Վազգենին»:

Ֆիլմի բոլոր դրվագներում Խորեն Լեւոնյանի ձայնը, քայլվածքը, արտաքին տեսքն ու հայացքը հիշեցնում է Սպարապետին, բայց դերասանը նշեց, որ աշխատել է իր ձեւով ու ոճով հանդիսատեսին հասցնել նրա էությունն ու մտածելակերպը, այլ ոչ թե «տնազ է արել»:

«Ֆիլմի ասելիքը մեկն է՝ Հայաստան, հայ, հայրենիք, սեր»,- ընդգծեց Խորեն Լեւոնյանը:

Ֆիլմի մտահղացման հեղինակը՝ Վազգեն Սարգսյանի եղբոր դուստրը նշեց, որ ֆիլմում որեւէ դրվագ հորինված չէ:

«1 տարեկանում եգիպտացորենի հատիկը կանգնել է կոկորդին, բժիշկներն ասել են, որ երեխան մահացած է, բայց, հրաշքով կարողացել է շնչել մինչեւ ծնողները տեղափոխել են Երեւան»,- պատմեց Նոնո Սարգսյանը: Հարցին՝ ինչպես կարձագանքեր Վազգենը ֆիլմը դիտելիս, Նոնոն նկատեց, որ հաստատ կբարկանար, եթե իմանար, որ իր մասին ֆիլմ է նկարահանվել:

«Նա չէր սիրում, երբ իր կենացն էին խմում կամ իր մասին երգում»:

Ֆիլմի վերջին դրվագի մասին խոսելիս Նոնո Սարգսյանը ընդգծեց. «Վազգեններ կան եւ լինելու են: Կյանքը շարունակվում է: Մենք պետք է շարունակենք նրա գործը եւ չհուսահատվենք»:

Ֆիլմի պրեմիերային ոչ պակաս հուզված ու տագնապած էր եկել նաեւ դերասանուհի Մարջան Ավետիսյանը, ով մարմնավորել է Գրետա մայրիկին: Դերասանուհին պրեմիերայից հետո անկեղծացավ, որ իր խաղը մասամբ հավանել է: «Մտավախությունս ավելի շատ արտաքինի հետ էր կապված, իսկ ցանկացած կերպարիս մեջ գտնում եմ սխալներ: Հուսամ՝ ֆիլմը հույզեր կառաջացնի»,- անկեղծացավ Մարջան Ավետիսյանը:

Հիշեցնենք՝ ֆիլմի սյուժեի առանցքում Վազգեն մարդն է, որդին, զգայուն հորեղբայրը, տաղանդավոր գրողը, սիրող տղամարդը, ռազմական ու պետական գործիչը: Ներկայացվում են նրա կյանքի գրեթե բոլոր փուլերը, որոնք միահյուսված են մեր երկրի նորագույն պատմության նշանակալի իրադարձություններին: Ֆիլմը նկարահանել է Genetic Production-ը: Գլխավոր պրոդյուսերը եւ մտահղացման հեղինակը Նոնո Սարգսյանն է, սցենարի հեղինակները՝ Լեւոն Սարգսյանն ու Արամ Կարապետյանը, ով նաեւ բեմադրող ռեժիսորն է, երաժշտության հեղինակը Արմեն Մարտիրոսյանն է, իսկ բեմադրող նկարիչը՝ Արմեն Ղազարյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՏԱԳՆԱ ՀԱՂԹԱՆԱԿ

Չեմպիոնների լիգայի 1/8-րդ եզրափակչի առաջին խաղում «Բարսելոնան» արտագնա հաղթանակ տարավ «Բենֆիկայի» նկատմամբ (1:0): Հանդիպման 22-րդ րոպեից սկսած «կապտանռնագույնները» խաղում էին 10 հոգով. ուղիղ կարմիր քարտով խաղադաշտից հեռացվել էր Պաու Կուբարսին: «Բարսելոնա»-ի հաղթանակը Չեմպիոնների լիգայի պատմության մեջ առաջին դեպքն է, երբ թիմը արտագնա խաղում՝ 69 րոպեից ավելի (ներառյալ մրցավարի կողմից ավելացված ժամանակը) խաղալով 10 հոգով, կարողանում է առավելության հասնել մրցակցի նկատմամբ: Թիմերի միջեւ պատասխան հանդիպումը կկայանա մարտի 11-ին՝ Երեւանի ժամանակով 21:45-ին:

ՑՄԱՀ ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄ

«Վեստ Հեմի» բրազիլացի կիսապաշտպան Լուկաս Պակետային ցմահ որակազրկում է սպառնում: Անգլիայի ֆուտբոլային ասոցիացիան բրազիլացուն մեղադրում է բուքմեյքերական խաղադրույքների կանոնները խախտելու համար: Նշվում է, որ Պակետան, իբր, միտումնավոր դեղին քարտեր է ստացել 2022 թվականի նոյեմբերից հետո կայացած «Լեսթերի», «Աստոն Վիլայի», «Լիդսի» եւ «Բորնմութի» դեմ խաղերում: Բացի այդ, կիսապաշտպանը մեղադրվում է հետաքննության պահանջները չկատարելու երկու հոդվածներով: Եթե մեղավոր ճանաչվի, նրան ցմահ որակազրկում է սպառնում ֆուտբոլից: 27-ամյա խաղացողի գործով լսումները կսկսվեն այս ամսվա վերջին եւ կտեւեն երեք շաբաթ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՌԵԿՈՐԴ

Միլանի «Ինտերի» արգենտինացի հարձակվող Լաուտարո Մարտինեսը Չեմպիոնների լիգայի 1/8-րդ եզրափակչի «Ֆեյենորդի» դեմ առաջին խաղում (0:2) պատմական ռեկորդ է գրանցել: 27-ամյա խաղացողը «ներաձուրիի» կազմում խփել է իր 18-րդ գոլը Չեմպիոնների լիգայում՝ դառնալով իտալական թիմի բոլոր ժամանակների լավագույն ռմբարկուն այս մրցաշարում: Արգենտինացին գերազանցել է նախորդ ռեկորդակիր Սանդրո Մացոլայի արդյունքը, որն իր ակտիվում ուներ 17 գոլ:

ԲԱԼԴԵՆ ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

«Բարսելոնայի» իսպանացի պաշտպան Ալեխանդրո Բալդեն վնասվածք է ստացել Չեմպիոնների լիգայի խաղարկության 1/8-րդ եզրափակիչի «Բենֆիկայի» դեմ կայացած առաջին խաղում (0:1): Այս մասին հայտնում է լրագրող Չավի Միգելը: Աղբյուրի տեղեկություններով՝ 21-ամյա խաղացողը խաղային իրավիճակներից մեկում կոճին ծանր հարված է ստացել, ինչի պատճառով կասկածի տակ է նրա մասնակցությունը «Օսասունայի» հետ Լա լիգայի առաջիկա հանդիպմանը: Նշվում է, որ կատալոնական ակումբում հույս ունեն, որ իսպանացին լիովին պատրաստ կլինի «Բենֆիկայի» դեմ պատասխան հանդիպմանը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Skype ՀԱՎԵԼՎԱԾԸ ԱՅԼԵՎՍ ՉԿԱ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Microsoft ընկերությունը պաշտոնապես դադարեցնում է Skype-ի աջակցությունը. անջատման գործընթացը կմեկնարկի արդեն 2025-ի մայիսին: Հետաքրքրականն այն է, որ Skype հավելվածը հեռանում է ընդմիշտ եւ ծրագրից օգտվողներին խորհուրդ է տրվել, որ անցում կատարեն Teams-ի: Skype-ի օգտատերերը նկատել են, որ Windows-ի համար նախատեսված Skype-ի վերջին փորձնական տարբերակում հաղորդագրություն կա, որում ասվում է, որ որոշ կոնտակտներ արդեն տեղափոխվել են Teams անվճար, ինչը, հավանաբար, նշանակում է, որ ընկերների ցանկը ավտոմատ կտեղափոխվի նոր հարթակ: Նշենք, որ Skype ծրագիրը ստեղծվել է 2003 թվականին, որը Microsoft-ը ձեռք է բերել 2011 թվականին: 2017 թվականին Microsoft-ը ներկայացրեց Teams-ը, որը հիմնված էր Skype-ի տեխնոլոգիաների վրա եւ ստեղծվել էր Slack-ի հետ մրցակցելու համար: Այդ պահից սկսած Skype-ի զարգացումը դանդաղեց, եւ նրա փակման մասին խոսակցությունները շրջանառվում էին արդեն մի քանի տարի: Skype-ը այդպես էլ չդարձավ Microsoft-ի հիմնական արտադրանքը, քանի որ Apple-ի FaceTime-ը գերիշխում է iPhone եւ Mac օգտատերերի շրջանում: Իսկ թե ինչ է լինելու հետո, բարդ է ասել, քանի որ Microsoft-ը դեռեւս պաշտոնական մեկնաբանություններ չի տվել, սակայն Skype-ի անջատումը մայիսին արդեն վերջնական որոշված է:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՐԶՈՅԱՆԻ

«Փոխանակ պարոն Ծառուկյանի գործը մի փոքր գնահատեիք, թե մի սովորական աղջկա համար ինչ արեց, դուք դրել ինչեր եք քննարկում, ի վերջո նա այդ գործն արել է ձեր փոխարեն», - այս մասին, ի պատասխան ԱԳՆ նախարար Արարատ Միրզոյանի արած հայտարարությունների, ասել է վերջերս Բելառուսից Հայաստան վերադարձած բլոգեր Բելլա Բաբախանյանը: Հիշեցնենք, որ Բելլա Բաբախանյանը կալանավորվել էր Բելառուսում հակաադրբեջանական քարոզչության համար եւ Գագիկ Ծառուկյանի ջանքերով վերադարձավ Հայաստան: Կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հայտարարել էր. «Ո՞վ է ջանքեր գործադրել բաց թողնելու համար, ո՞վ է դա ներկայացնում որպես իր ձեռքբերում, չգիտեմ: Մեզ այդքանը չի հետաքրքրում: Մենք հավաստիացել ենք, որ մեր քաղաքացին 15 օրից հետո բաց է թողնվելու»: Բլոգերը մասնավորապես նշել է. «Տեսա, որ Ազգային ժողովում իմ հարցն էր քննարկվում: Չգիտեի, որ փաստորեն Արարատ Միրզոյանն էր եկել իմ հետեւից, փաստորեն Արարատ Միրզոյանն է այդ դժվար պահին իմ կողքին հայտնվել, ես չգիտեի, որ դուռը բացեցի ու տեսա, որ Արարատ Միրզոյանն է կանգնած, ինձ թվաց, որ ուրիշ մարդ էր: Ես չգիտեի, որ այդ դժվար պահին, որ ինձ թվում էր՝ էլ չեմ վերադառնա հայրենիք, որովհետեւ ինձ ասել էին, որ 15 օրից հետո ես ոչ մի տեղ էլ չեմ գնալու, Արարատ Միրզոյանն այդ դժվար պահին եկավ եւ կողքս կանգնեց, պատվիրեց ինքնաթիռ, բերեց ինձ Հայաստան: Այս թողնենք ժողովրդի դատողությանը»:

● Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում մարտի 7-ին, ապրիլի 13-ին տեղի կունենա «Ուշ լինի, նուշ լինի» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-4000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Արդեն շուրջ մեկ տարի է, ինչ աշխատում եմ որպես զբոսավար՝ պատմելով Հայաստանի մասին օտարերկրացիներին: Վերջերս իտալացի մի զբոսաշրջիկ ասաց, թե կարդացել էր, որ եկեղեցական հագուստի գլխածածկի եռանկյունաձեւ եւ բարձր լինելը խորհրդանշում է Արարատը: Արդյո՞ք դա այդպես է:

Անիտա Սիմոնյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ խոսքը վեղարի մասին է: Հանդերձանքի այդ պարագայի հորինվածքը նմանեցվել է եկեղեցու գմբեթին, որն էլ իր հերթին ունի դեպի կատարելության ձգտման խորհուրդ: Մենք գիտենք, որ եկեղեցու գմբեթները բազմանիստ են եւ կլոր, բայց այն ուղիղները, որ դուրս են գալիս այդ կետերից, հատվում են մեկ կետում, որն էլ խորհրդաբար համարվում է կատարելության կետը: Հենց այդտեղ է դրված եկեղեցու խաչը: Ուստի հոգեւորականի վեղարի հորինվածքը եկեղեցու գմբեթի նմանությունն ունի, այլ ոչ թե Արարատի, որը ի դեպ, երկու գագաթ ունի:

Օրհնությամբ՝ Տեր Շմավոն քահանա Ղեւոնդյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայ Առաքելական եկեղեցու հովվապետի հանդերձանքի ձեւավորման, ստեղծման եւ զարգացման գործընթացը Հայաստանում սկսվել է քրիստոնեության ընդունումից անմիջապես հետո: Այն դարերի ընթացքում, ըստ կանոնակարգի, զարգանալով եւ համալրվելով կատարելագործվել, ձեռք է բերել բազմաշերտ կառուցվածք եւ շքեղ հարդարանք: Իր արտաքին տեսքով այն խիստ պատկառազդու է, օժտված հնօրյա խորհրդաբանությամբ: Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցում կաթողիկոսական հանդերձանքն այն կրողի գրաված դիրքի հիմնական ցուցիչն է, նրա սոցիալական կարգավիճակի արտահայտիչը: Որպես Հիսուսի փոխանորդ, Սուրբ Սեղանի առջեւ ծառայող հովվապետի ծիսական հանդերձանքը ներկայացնում է նաեւ հովվապետի համալրված հոգեւոր վիճակը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ, Խնդրում եմ ասեք՝ որ դեպքում է մերժվում անձին կենսաթոշակի նշանակումը:

Անահիտ Խաչատրյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Խաչատրյանի հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ կենսաթոշակի նշանակումը մերժվում է, եթե՝

անձը չունի կենսաթոշակի իրավունք,

կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ ՀՀ-ում բնակության վայրի հասցեով,

ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտնում ենք, որ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը կենսաթոշակի եւ կենսաթոշակ ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենալու ժամանակահատվածում: Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա կենսաթոշակ չի ստանում այն պետությունից, որի քաղաքացին է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեբունի վարչական շրջանում

Փաստորեն շունն ու կատուն հին ավանդույթներին չեն հետեւում. նրանք հաշտ ու համերաշխ՝ պառկել են արեւի ճառագայթների տակ՝ կանգառի նստարանին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-9 - 12 -4 - 7
Կոտայքի լեռներ	-11 - 14 -5 - 7
Կոտայքի նախալեռներ	-6 - 10 -1 - 3
Գեղարքունիք	-10 - 13 -6 - 8
Լոռի	-10 - 15 -3 + 1
Տավուշ	-5 - 8 -2 + 2
Արագածոտնի լեռներ	-10 - 15 -6 - 10
Արագածոտնի նախալեռներ	-6 - 9 0 - 3

Արարատ	-4 - 7 0 + 2
Արմավիր	-6 - 9 0 + 3
Վայոց ձորի լեռներ	-11 - 14 -6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	-6 - 11 0 - 3
Սյունիքի հովիտներ	-5 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	-10 - 12 -2 - 5
ԼՂՀ	-10 - 12 -2 - 4
Երեւան	-2 - 5 -2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.3.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*